Ամէնօրեայ Աղօթքներ - Ամենօրյա Աղոթքներ

Շնորհակալութիւն կը յայտնենք քեզի, ով Տէր, մեր Աստուածը, որ քու ողորմութեամբդ մեզ առաջնորդեցիր ցերեկուան մեր գործերուն մէջ, եւ շնորհեցիր որ միասնաբար հասնինք գիշերային այս հանգիստին: Մշտապէս կ'աղաչենք, որ մեր անձերուն պահապան ըլլաս, եւ քու ողորմութեամբդ պահես եւ առաջնորդես մեզ քու բարի հանգիստիդ, որ քեզ սիրողներուն տալ խոստացար: Քեզի կը վայելեն փառքը, իշխանութիւնն ու պատիւը, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

Շնորհակալություն ենք հայտնում քեզ, ով Տեր, մեր Աստված, որ քո ողորմությամբ մեզ առաջնորդեցիր ցերեկային մեր գործերի մեջ, և շնորհեցիր որ միասնաբար հասնենք գիշերային այս հանգստին: Մշտապս աղաչում ենք, որ մեր անձերին պահապան լինես, և քո ողորմությամբ պահես և առաջնորդես մեզ քո բարի հանգիստիդ, որ քեզ սիրողներին խոստացար: Քեզ են վայելում փառքը, իշխանությունն ու պատիվը, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից: Ամեն:

Քու Խաչդ թող մեզի ապաւէն ըլլայ, Տէր Յիսուս, երբ Հօրը փառքով երեւիս՝ լուսաւոր ամպերու վրայ: Այն ատեն թող ամօթով չմնա՛նք մենք՝ Քեզի յուսացողներս, այլ Քու մեծ զօրութեամբդ ուրախանանք՝ Քու աջ կողմդ բազմած, իբրեւ լոյսի որդիներ եւ փրկութեան ժառանգորդներ: Ամէն:

Թող Քո Խաչը մեզ ապավեն լինի Տեր Հիսուս, երբ որ երևաս Հոր Փառքով՝ լուսավոր ամպերի մեջ, այն ժամանակ մենք չենք ամաչի, Քեզ հուսացողներս, այլ Քո մեծ զորությամբ կուրախանանք Քո Աջ կողմում, իբրև լուսո որդիներ, իբրև ցերեկվա որդիներ: Ամեն:

Բոլորը խնամող Տէր, քու սուրբ երկիւղդ պահապա՛ն դիր աչքերուս՝ որ այլեւս անառակ աչքով չնայիմ, եւ ականջներուս՝ որ ախորժ չզգամ չար խօսքեր լսելէ, եւ բերանիս՝ որ ստութիւն չխօսիմ, եւ սրտիս՝ որ չարութիւն չխորհիմ, եւ ձեռքերուս՝ որ անիրաւութիւն չգործեմ, եւ ոտքերուս՝ որ անօրէնութեան ճամբաներէն չքալեմ. այլ ուղղէ՛ ասոնց շարժումը, որպէս զի միշտ քու պատուիրաններուդ համաձայն ըլլան եւ ողորմէ՛ քու արարածներուդ եւ ինծի՝ բազմամեղիս:

Ամենախնա՛մ Տեր, Քո սուրբ երկյուղը պահապան դի՛ր աչքերիս՝ ՝ այլևս անպատկառ չնայելու, ականջներիս՝ չախորժելու լսել չար խոսքեր, բերանիս՝ սուտ չխոսելու,սրտիս՝ չարը չխորհելու, ձեռքերիս՝ անիրավություն չգործելու, և ոտքերիս՝ անորենության ճանապարհով չգնալու, այլ ուղղի՛ր սրանց ընթացքը՝ միշտ լինելու ըստ Քո պատվիրանների. և ողորմի՛ր Քո արարածներին և ինձ՝ բազմամեղիս:

Ո՜վ գթած Հայր, բարեխնամ արարիչ բոլոր արարածներու, ընդունէ՛ Քու ծառաներուդ պաղատանքը այս երեկոյեան ժամուն, Դուն, որ առատաձեռն ես ամենուն հանդէպ, Քու բարի պարգեւներովդ ողորմէ, Տէր, ամբողջ աշխարհին Քու սուրբ եկեղեցիիդ. հիւանդներուն, խոստովանողներուն, ապաշխարողներուն եւ ննջեցեալներու հոգիներուն, որովհետեւ Դուն ամենակալ Տէր, գիտես մեր պէտքերը եւ կարիքները մեր խնդրածէն եւ հասկցածէն աւելի, եւ քեզի, Որդիիդ եւ ամենասուրբ Հոգիիդ հետ, կը վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

Ո՜վ գթած Հայր, բարեխնամ Արարիչ բոլոր արարածների, ընդունի՛ր քեզ ծառայողներիս այս պաղատանքը երեկոյան այս ժամին, Դու, որ առատորեն Քո բարի պարգեւներն ես տալիս բոլորին: Ողորմի՛ր Տե՛ր, ամբողջ աշխարհին և մանավանդ Քո Սուրբ Եկեղեցուն. հիվանդներին, վշտահարներին, ճամփորդներին, նավորդներին, խոստովանողներին, ապաշխարողներին և հանգուցյալ հոգիներին, որովհետեւ Դու, ամենակա՛լ Տեր, գիտես մեր պետքերն ու կարիքները՝ մեր խնդրածից և գիտցածից էլ ավելի: Որդուդ եւ Ամենասուրբ Հոգուդ հետ միասին քե՛զ վայելում են փառքը, իշխանությունն ու պատիւը, այժմ եւ միշտ և հավիտյանս հավիտենից:
Ամեն: